

## ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

### ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

#### ՆԱԻԱՍԱՐԴ

Մի նոր հրատարակութիւն եւս՝ «Ժողովածու Գրականութեան եւ Գիտութեան», խմբագիրներ՝ Յովս. Թադէոսեան եւ Տն. Պօղոսեան, հրատարակիչ՝ Մ. Մկրտչեան՝ «Ալիք» քերթի հրատարակիչը միաժամանակ: Հրատարակութեան վայրը՝ Թեհրան:

«Նաւասարդ» առաջին փորձը չէ իրանահայութեան մէջ. եղել են սրան եւ նախընթացներ, դժբախտաբար, կարճատեւ կեանքով: Սակայն, «Նաւասարդ»-ը քուսմ է աւելի հիմնաւոր գործ եւ, մանաւանդ, աւելի կարող ձեռների մէջ: Յովս. Թադէոսեան հին եւ փորձաւոր գրական գործիչ է, որ իր հմտութիւնը ցոյց տուց նաեւ «Ալիք» քերթի հրատարակութեան գործում. պէտք է հերթադրել, որ այս ձեռնարկն էլ յաջողութեամբ գլուխ կը հանէ:

Առաջին քուսմը երաշխիք են այս տեսակետից. մաքուր սպագրւած էջեր, ակնյայտնի հոգածութիւն նիւթերի ընտրութեան եւ դասաւորութեան մէջ, աշխատակիցների բազմազանութիւն, նիւթի խնամած դասաւորում ըստ բաժինների եւ հետաքրքրութեան — խմբագրողի ձեռքը երեւում է ամէն տեղ: Իբրոք, ոչ քէ «Ժողովածու» է այս, այլ՝ ձեռով ու բովանդակութեամբ՝ մի պար-

բերական՝ իր համապատասխան բաժիններով:

Ինչի՞ է ձգտում այս նոր պարբերականը: «Տարածել գիրն ու գրականութիւնը ընթերցող հասարակութեան լայն խաւերում, ասպարէզ բաց անել մեր գրական ուժերի — մանաւանդ երիտասարդ գրողների — ստեղծագործութեան համար եւ այդպիսով զարկ տալ նրանց յառաջդիմութեան եւ, վերջապէս, մատակարարել ընթերցանութեան յարմար նիւթ մեր նոր սերնդին, ինչպէս եւ ուղեցոյց հանդիսանալ ծնողներին իրենց երեխաների դաստիարակութեան գործի մէջ» — այսպէս է բնորոշւած նպատակը «Երկու խօսք»՝ խմբագրականի մէջ:

«Նաւասարդ»-ի բովանդակութեան մասին, երեւի, դեռ առիք կունենանք խօսելու, իսկ առ այժմ մենք էլ «ուզում ենք հաւատալ, որ «Նաւասարդ»-ը կունենայ լայն տարածում հայ ընթերցող հասարակութեան մէջ», բայց այդքանը բաւական չէ. ընթերցողները ոչ միայն պէտք է ստանան ու կարդան, այլ բաժնեգինն էլ վնարեն, այլապէս սոսկ հաւատով ու գոհաբերելու պատրաստակամութեամբ մեր մէջ գործը չի փայլի...

#### ԶԻԱՐԹՆՈՅ

Սա էլ է նոր՝ «ամսօրեայ գրքեր», Փարիզում, Հր. Բալուեանի խմբագրութեամբ: Բալուեանը ծանօթ

դէմք է՝ մեր հին նորերից: Նախկին «Զարբնոց» հանդէսի եւ «Զարբնոց» տարեգրքի խմբագիրը: Բնականաբար,

այս ձեռնարկն էլ ունի նախորդների յատկութիւնները:

«Զւարթնոց»-ը մեծադիր Տ էջնոց «գրաքերք» է, փարիզեան շաքաքաքերքերի ձեւով: Կազմած է խնամով ու նաշակով. կայ նիւթերի բազմազանութեան ձգտում. ունի եւ գրական տեղեկատուութեան բաժին: Անշուշտ, ժամանակի ընթացքում բաժինները աւելի կը նոխացին. պէտք է միայն, որ ձեռնարկը յարատեւի:

Իր նպատակը խմբագրութիւնը հետեւեալ՝ ձեւով է պատկերացնում. «Հետամուտ լինելով եւրոպական արւեստին եւ իմացականութեան կատարած խորացումներուն, հնարաւոր յաջողութեամբ ստունց արդիւններուն փոխադրումը՝ մեր մէջ: Միեւնոյն ատեն արծարծելով երիտասարդ սերունդին մէջ արւեստին սէրն ու խանդավառութիւնը, այսինքն՝ նախապայմանները ստեղծագործական երկունքին, որուն շնորհիւ ժողովուրդներ կերկնեն իրենց յաւաքդիմութեանց հալովոյքը»:

Լաւ նպատակ: Միայն պէտք չկայ խրթին բաների ետեւից վագելու: Սխալ է ասել, թէ՛ «Թուսքօ, Տոսքոյեւսի, Կորբի շաղախեցին համայնավար վարդապետութիւնը ուսու ժողովուրդէն ներս»: Կամ թէ չէ՛ «Ապագայապաշտ արւեստի շարժումը ստեղծեց ֆաշիզմը՝ իտալիոյ մէջ»: Եւ կամ՝ «Զունեմայինի Բաֆֆին՝ չէին ծներ յեղափոխական կազմակերպութիւնները մեր մէջ, հետեւաբար չէինք ունենար ներկայ Հաստատմը, նիւթական թէ գաղափարական ոլորտներուն մէջ»: Գլխովին սըլսալ դատողութիւն: Ֆաշիզմի վրա, անշուշտ, որոշ ազդեցութիւն արու ապագայապաշտ արւեստը, Բաֆֆիի դերը շատ մեծ եղաւ յեղափոխական շարժման ծնունդի ու ձեւակերպման մէջ, բայց ո՛չ փուտութիւնը ծնողն է ֆաշիզմի, ո՛չ էլ Բաֆֆին՝ հայր մեր յեղափոխական ֆազմակերպութիւնների:

«Զւարթնոց ամսօրա»-ն հիմնած է «Զւարթնոց տարեգիրք»-ին կից: Այդ է պատճառը, երբեւ, որ «ամսօրեա»-յում գետեղած են «տարեգիրք»-ի խմբագրին ուղղած մի շարք «համակրանք»-ի արտայայտութիւններ, որոնց բում եւ ն. Աղբալեանի մէկ նամակը: Մեզ յայտնի չէ, թէ արդեօ՞ք այդ նամակը սահմանած էր հրատարակութեան, բայց քանի որ հրատարակած է, չենք կարող մի քանի խօսք չասել նրա մասին:

Ն. Աղբալեանի հիմնական մտքը, ի հարկէ, անվիճելի է. Հայաստանում միայն «մեր մշակոյթը ապագայ ունի»: Վէճը սկսում է այնտեղից, երբ հայ մշակոյթի բուն բոլորիկացումը համեմատում է Տրդատի արած բուն քրիստոնէացման հետ եւ, կարծես, հովանաւորութեան տակ են առնում բոլորիկների արարքները. «Հայոց ազգը կը մարսէ եւ կազգայնացնէ նաեւ նո՛ր ժամանակի ոգին օւ գաղափարները, ինչպէս երբեմն քրիստոնէութիւնը. կը մարսէ, երէ կենդանի մնայ: Կարած գլուխները չեն ստեղծագործում. Գեր - Զորն օրինակ»...

Խնդիրն էլ հէնց այդտեղ է. «Կտրուած գլուխները չեն ստեղծագործում», իսկ ինչո՞վ են զբաղւած Հայաստանում բոլորիկները 16 տարի շարունակ, երէ ոչ՝ «գլուխ կտրելով»:

Նամակի միւս սխալն էլ այն է, որ նա հրատարակութեան գիծ է դնում «նոր ժամանակի ոգիի ու գաղափարների» եւ բոլորիկմի միջեւ. գէթ նամակի կանուցւածից այդպէս է դուրս գալիս: Մեր գաղափարական ընդդիմութեան ու պայքարի ամբողջ իմաստը հէնց նրանում է, որ «նոր ժամանակի ոգին ու գաղափարները» տարբեր բաներ են, եւ «լենինիզմն ու ստալինիզմը» տարբեր: Երէ այդպէս չլինէր, այն ժամանակ կը դառնար անհասկանալի, թէ ինչո՞ւ օրինակ, Աղբալեաններն ու Շանքերը, են-

քակայ անհնարին գրկանքների, ստիպ-  
ւած են կեանք մաշել Բէյրութում եւ ոչ

քէ ապրել ու ստեղծագործել հարազատ  
ժողովրդի մէջ, Հայաստանում:

ՀԵՐԿ

Այս նոր ամսագիրը ծնունդ է առել  
Բուրբէշում: Արդէն լոյս է տեսել հինգ  
տետրակ, իւրաքանչիւրը 16 էջնոց:  
«Հերկ»-ի նպատակն է «ժտածել սոր-  
վել», «Հերկ»-ի շուրջ հաւաքւած խումբ  
մը երիտասարդներ, իրենց համեստ ու-  
ժերով կուգեն մտածել ու ապրիլ նոր  
ժամանակներու մտածումներով ու խըն-  
դիրներով եւ նաեւ հայ ժողովուրդի  
ներկայի եւ ապագայի հետ կապւած  
հարցերով» (քիւ 1): «Հերկ»-ի բաղ-  
ձանքն է «ազգային հաւաքական մտա-  
ծումի դիսիպլինը ստեղծել», որովհե-  
տեւ «ազգովին մտածելով միայն կարելի  
է ազգովին ապրիլ»: Ու յետոյ, վերջին  
տետրակի (քիւ 3 - 4) յառաջաբանում՝  
«Մեր ուղին պիտի կառուցանենք ժա-  
մանակի ընթացքին»:

Ուրեմն, «Հերկ»-ը երիտասարդա-  
կան մի պարբերաբերք է, որի խմբա-  
գլխներն ու աշխատակիցները դեռ սե-  
փական ուղի չունեն եւ ուզում են մը-  
տածել սովորել ընթերցողների հետ:  
Վատ նպատակ չէ: Մտածել սովորելը,  
յամենայն դէպս, քաջալերանքի արժա-  
նի բան է: Վատը այն է, որ դեռ սե-  
փական ուղի չունեցող եւ մտածել սո-  
վորելու կարիքը զգացող մարդիկ, փո-  
խանակ սովորելու, արդէն սկսել են  
ուրիշներին սովորեցնել (քիւ 3 - 4-ի  
յառաջաբանը) եւ ուրիշների «ուղի ու-  
նենալը» ծաղրել: «Մտածել սորվելու»  
տարօրինակ ճեւ եւ բոլորովին անյաջող  
սկզբնաւորութիւն:

Վատ է եւ այն, որ մի կողմից «Հեր-  
կ»-ի երիտասարդները իստատացնում  
են, քէ՛ «ճամբայ ելած ենք ոգեպաշտ  
մեկնակէտէ մը: Սեփական դիմագծու-

քիւն եւ ոգի կառուցանելու մեր նաճա-  
պարիք պիտի շարունակենք միեւնոյն ո-  
գեպաշտ հաւատով՝ այդ նաճապարհին  
մէջ պարփակելով համադրաբար հայ  
կեանքի ու հոգիի բոլոր երեսները»: Իսկ  
միւս կողմից «Հերկ»-ի տետրակ-  
ները լեցնում են քարգամուր-իւնեն-  
քով, քաղածքներով կամ շարադրու-  
թիւններով օտար հեղինակներից եւ հայ  
իրականութիւնից չբխող նիւթերի մա-  
սին: Եւ այդ նիւթերը տալիս են այն-  
պէս, որ ընթերցողը գգում է, քէ «Հեր-  
կ»-ի երիտասարդները պէտք ունեն  
ա՛յ միայն «մտածել սորվելու», այլ ընդ-  
հանրապէս՝ սորվելու: Սովորելու, մա-  
նաւանդ, հայկական բաները:

Այս բոլորով հանդերձ, «Հերկ»-ը  
քաջալերական երեւոյթ է: Նա ցոյց է  
տալիս, որ օտար միջավայրից գրաււած  
հայ երիտասարդութեան մի որոշ մասը  
յամտօրէն ուզում է մնալ հայ՝ կապ-  
ւած հայ կեանքին ու հայ մշակոյթին,  
եւ հայ լինելն ու հայութեամբ ապրե-  
լը հոգեկան հաճոյք է համարում իրեն  
համար: Մենք կը մաղթելինք միայն, որ  
«Հերկ»-ի շուրջ համախմբւած երիտա-  
սարդները աւելի շատ գրադէին Հա-  
յաստանով ու հայ մշակոյթով, սովո-  
րելին հայոց պատմութիւնն ու գրակա-  
նութիւնը, քերքի էջերը լեցնէին հա-  
յութեան վերաբերող նիւթերով: Իսկ  
Մարտինի մասին, Ռուզվէլտի տնտեսա-  
կան քաղաքականութեան մասին, բուր-  
ժուայի կամ դիալեկտիկի մասին շատ ա-  
ւելի հիմնական ու խնամւած ուսումնա-  
սիրութիւններ կարելի է կարգալ օտար  
լեզուներով էլ: Զէ՞ որ ձեր նպատակն  
է սովորել եւ «ուղի կառուցանել ժա-  
մանակի ընթացքին»- հայկական ուղի,

անշուշտ: Դրա համար, ամենից առաջ, պէտք է գիտենալ Հայաստանի ու հայ ժողովրդի անցեալն ու ներկան: Այլա-

պէս կարելի չէ ունենալ «ազգային - հասարակական կեանքը դիտելու համարական տեսակետ»:

### «ՀԱՆԴԻՏ ԱՄՍՕՐԵԱ»-ՅԻ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ

Հոկտ. 3-ին, Վիեննայի Միտիքարեան Միաբանութիւնը, տեղական հայ գաղութի եւ օտար հիւրերի մասնակցութեամբ, հանդիսարարպէս տօնեց «Հանդէս Ամսօրեայ» հայագիտական պարբերականի յիսնամեակը:

«Հանդէս Ամսօրեայ»-ն ընթերցողներին ներկայացնելու պէտք չկայ. նրա կատարած դերը հայագիտութեան բնագաւառում այնքան մեծ է ու ծաւալուն, որ ամէն հայերէն կարդացող ծանօթ է: Բաւական է յիշել մի մասը միայն գիտնականներից, որոնք գրել են ու ունեւ տակաւին աշխատակցում են, որպէսզի պարզ լինի այս պարբերականի կշիռը: «Հանդէս Ամսօրեայ»-ին յիսուն տարիների ընթացքին աշխատակցել են՝ Հ. Արսէն Այտընեան, Կ. Գաբրիէլ Մէնէ-Վիշեան, Կ. Գրիգոր Գալէմէֆեարեան, Կ. Վեռնոյ Յովնանեան, Կ. Գրիգոր Գովրիկեան, Կ. Յովսէփ Սանտալեան, Կ. Յ. Գաբրեան, Կ. Տաշեան, Վրոֆ. Կալաբեան, Տոքթ. Թորգոմեան, Հ. Ա-

նտեան, Բարգէն Կաթուղիկոս, Նորայր Բիւզանդացի, Կար. Բասմաջեան, Թորգոմ Պատրիարք, Յ. Դազանեան, Ս. Մալխասեան, Յակ. Մանանդեան, Նիկ. Ադոնց, Թ. Աւքալբեգեան, Առաքել Սարուխան, Տոքթ. Գաբրիէլեան, Ն. Աղբալեան, այլ եւ օտար գիտնականներ՝ Օկիւսթ Քարիէր, Մարքուատ, Փէրէրս, Նիքոլա Մառ, Քոնիպիո, Թուրքմըպիզ, Քարստ, Անթուան Մէյքէ, Սիմոն Վէպէր, Պիշոֆ, Կեցլեր, Կիւքերպոֆ, Յեքքեր, Էֆեարտ, Բուրք, Քոնիլեր, Զայտել, Լուրբէ, Փէրէրսէն, Վակնէր եւ այլն:

Բնականաբար, «Հանդէս Ամսօրեայ»-ն էլ գերծ չի եղել նիւթական դժարութիւններից, եւ 50 տարւայ մէջ 100,000 շիլինգի բաց է քողել, որի 25,000ը միայն ծածկել է մասնաւոր ներքնորով, իսկ մնացեալը հոգացել է Միաբանութիւնը: Մարքեմէ, որ այսուհետեւ գոնէ իմբնաբաւ դառնայ այս այնքան օգտակար եւ անկրածեշտ հանդէսը:

### «ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի 15ԱՄԵԱԿԸ

Այս Հոկտեմբերին լրացաւ «Հայրենիք» ամսագրի հրատարակութեան 15-ամեակը: 15 տարի, 180 թիւ, 60 յու ու բազմակողմանի բովանդակութիւն, բեռնաշինարար նշողապահութիւն հրատարակութեան ժամանակի վերաբերմամբ, աշխատակիցների հարուստ ու բարձրարակ կազմ — ահա հիմնական յատկանիշները մեր այս վաստակաւոր պարբերականի: «Հայրենիք» ամսագիրը արտասովոր երեւոյթ է ո՛չ միայն տարագիր հայութեան, այլ եւ, առհասարակ,

հայ կեանքում: Հայաստանի մտաւորականութիւնը, հակառակ որ իր տրամադրութեան տակ ունի նիւթական ամէն յարմարութիւն, չկարողացաւ հեռուոր չափով իսկ «Հայրենիք»-ին նման մի պարբերական ստեղծել: Եթէ մի օր Սփիւռքի հայութիւնը վերադառնալու լինի հայրենիք, իր հետ տանելիք մշակութային արժէքների մէջ առաջին տեղը պիտի բռնէ, անշուշտ, «Հայրենիք» ամսագիրը:

15 տարւայ կեանքից յետոյ էլ «Հայ-րենիք» ամսագիրը շարունակում է պահել իր բարձր որակը եւ տալ ընթերցող հասարակութեան ինչ որ կայ բանգար-ծէ՛ք մեր կեանքի եւ մշակոյթի բնագա-ւառում: Մի փայլուն գործ, որի հա-մար հայ հասարակութիւնը երախտա - պարտ պէտք է լինի նախ՝ Հ. Յ. Դ. Ա. մերիկայի Կեդր. Կոմիտէին, որ ո՛չ մի

ջանք չի խնայում մշակութային այս կարեւոր ձեռնարկը կանգուն պահելու համար, ապա՝ բազմահմուտ խմբագիր Ռ. Դարբինեանին, որ կարողացաւ ամ-սագրի շուրջը համախմբել հայ մտաւո-րականութեան ընտրանին. պէտք է մաղ-թել, որ ընթերցող հասարակութիւնն էլ գիտակցութիւնն ու յարասեւութիւնը ունենայ պահելու այս գեղեցիկ գործը:

«ՆՈՐ ՕՐ»-Ի ԵՒ «ՀՈՐԻԶՈՆ»-Ի ՄԻԱՅՈՒՄԸ

Սեպտ. 8-ից սկսած Աքէնքի «Նոր Օր» եւ Սելանիկի «Հորիզոն» օրաթեր-քերը միացել են եւ հրատարակում են «Նոր Օր» անունով, ուրիշ խօսքով՝ «Հորիզոն»-ը միացել է «Նոր Օր»-ին: Միանգամայն ողջունելի քայլ, որովհե-տեւ յունահայ փոքրիկ գաղութի հա-մար գաղափարական միեւնոյն ուղղու-թեան պատկանող երկու օրաթերքերը, բւում է թէ, շատ էին: Միացումը, ան-շուշտ, կը ծառայէ ի նպատտ «Նոր Օր»-ի ուժեղացման:

«Հորիզոն»-ը, որ այս կարգադրու-թեամբ դադարում է գոյութիւն ունե - նալուց, 10 տարւայ կեանք ունեցաւ՝ տալով 3025 թիւ քերք, Կարօ Գեորգ-եանի խմբագրութեամբ: Կ. Գեորգեան

կոչումով լրագրող է, օժտած բնական ձիրքով, որ տարիներ շարունակ, աշ-խոյժ ու նարտար գրչով, վարեց իր քերքը: «Հորիզոն»-ը միացնելով «Նոր Օր»-ին անշուշտ, այսուհետեւ էլ պի-տի շարունակէ մօտից աշխատակցել վերջինին, ինչպէս նաեւ «Հորիզոն»-ի շուրջ համախմբած ուժերը: Այսպի - սով, «Նոր Օր»-ը ո՛չ միայն յունահայ գաղութի միակ օրաթերքը կը դառնայ, այլ եւ աւելի աչքի ընկնող տեղ կը գը-րաւէ մեր մամուլի մէջ: Եւ այդ արդէն նկատելի է: Միութիւնից յետոյ, «Նոր Օր»-ը, պատասխանատու խմբագրու - րեամբ Գաբր. Լազեանի, դարձել է ա-ւելի հարուստ բովանդակութեամբ, ա-ւելի բազմակողմանի, հետաքրքրական, հետեւաբար, եւ աւելի ժողովրդական:

